Գինը 3 կոպ.

ՀԱՄՈ-ՄՍԻՄ.ՍՍՐ
Ա. ՄՍՐՅԱՆԻ

Գինը 3 կոպ.

ՆՈՐ-ՍԱՏՈՒԿ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

№ 28 Երեքշաբթի, 10 Փետրուարի 1915 թ. № 28

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

ԼՈՒՐԵՐ

—Աթէնքից մամռուը ապրիլներից ակնկալում են, որ Յունաստանում, չը նայած Վիլհէլմի անձնական հեռագրին ուղած կանգառներին բազուորին, որով խնդրում է ձեռնարկ ձեալ Քիւրքիայի դէմ անցկ գալուց, արդէն նաւատորմի ընդհանուր զօրաժողովն է յայտարարուած, ինչի են կանչւում նաև ցամաքային մի քանի զօրամասեր։

—Ռեւտերի վրայով Ճարպրագ է անում իշխան Հօհենլօէն, որը յանձնելու է Վիլհէլմ կայսեր նամակը Սուլթանին։

—Յունական մամուլը դժգոհ է Սազոնովի ճառի այն մասից, որը վերաբերում է նեղուցներին և կ. Պօլսին։ Լրագիրները յայտնում են, որ երբ Քիւրքիան անհետացել երօպայի քարտէզից, նեղուցները և կ. պօլիսը կամ դառնան չէզօք կամ բաժին ընկնեն Յունաստանին, որովհետև «Ինքը Հասած վերջին ժամանակ նրա կողմն է»։

—Անգլիան և Ֆրանսիան խոստացել են Յունաստանին 150 միլիօն ֆրանկ պատերազմական գործողութիւններ սկսելու դէպքում։

—Ի. Ե.-ին հեռագրում են Փարիզից. «Ալբանիան զօրաճակատում միայն Էյմամի շրջանում ռազմական գործողութիւնները ընդունել են բաւական կարեոր ռազմագործական նշանակութիւն»։

—Գիննեթալ Լակրուան կարծում է, որ զերմանացիների նոր առաջխաղացումը Ալբանիան Պրուսիայում ժամանակաւոր երեւոյթ է, որը կվերջանայ, անկասկած զերմանացիների նոր պարտութեամբ։

—Բեգ-ին հեռագրում են Բուդապեշտից, որ Զապրէդում, Սարաեվօյում, Աբազում և Բազօդում յայտարարուած է պաշարողական դրութիւն։

—Բուխարեստի ասմանից հաղորդում են, որ աւստրիական ոյժերը ճակատել են ռուսների հետ Ստօրօժինեցի շրջանում քրնդանօթային տաք կռիւ յետոյ աւստրիական մի զօրամաս յարձակման դիմից, բայց վանվեց ռուսներից ծանր կորուստներով։ Չնայած աւստրիական ոյժերի զերակշռութեան, աւստրիացիների գործողութիւնները վերջացան անյաջողութեամբ։

—Messagero-ն յայտնում է, որ Վիլհէլմը կրկնեց Վարշաւան առնելու իր հրամանը, որը արուեց զօրքերին Բաւկայի ճակատի ուղղութեամբ։ Ռուսական զօրքերին Բաւկայի ճակատի ուղղութեամբ առաջ, ուր ընկան 15.000 գերմանացի։ Ամենից շատ տուժեց 7-րդ զօրաբանակը։

—Էյմամ անընդհատ ռմբակոծւում է կատարի կերպով։ Քաղաքից ապստամբութիւնը վախչում է։

—«Ե. Ե.»-ին հեռագրում են Վաթշաւայից. «Կէս տարուայ ընթացքում գերմանացիք կալիշը դարձրել են ուժեղ բերդ»։

—Գերմանացիք նոր ոյժ են զործ գնում կալէն գրաւելու։

—Հռոմից հեռագրում են, որ Իտալիան վճռապէս հարցադնդում է արեւ Բերլին և Վիէննա, թէ մտադիր են արդեօք դաշնակիցները յարձակել Բուխարեստի վրայ։

—Միխայելովսկին գրում է Բ. Շ.-ում. «Ներկայ րոպէին գերման զօրքերը յարձակման են ձեռնարկել 300 վերստ. տարածուղ զօրաճակատով, սկսած Վլօցկի մօտից մինչև Սուվալկա։ Մօտիկ օրերում պէտք պարզուի, թէ մենք գործ ունենք արդեօք մեր աչ զօրաթևի դէմ ուղղած վճռական հարուածի հետ, թէ մի հակայական ցոյցի հետ որի նպատակը սոսկ մեզ վախեցնելն է»։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պետրոգրադի հեռագրական գործակալութիւնից 10 փետրուարի.

Սերբ.-Աւստր. պատ.	Ռուս.-գերմանական	Գերմ.-Ֆրանսիական	Անգ.-գերմանական	Ռուս.-Աւստրիական	Ռուս.-Տաճկական
211 օր.	208 օր.	204 օր.	201 օր.	200 օր.	116 օր.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ փետրու. 8-ին. ԳԵՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՇՏԱԲԻՑ. Գերմանացիները մի շարք բացառիկ և յամառ յարձակումներ կատարելով և մեծ քանակութեամբ զոհեր տալով ու համոզւելով, որ անկարող են վիսլայի աջ ափում գտնուղ մեր բանակը ճեղքել, յուն. ամսում գիմեցին մի նոր ծրագիր իրագործելու։ Թագաւորութեան ներսում վերջացնելով մի քանի նոր կօրպուսների կազմակերպութիւն և որոշելով արևմտեան զօրաճակատի իր զօրքերը բերելու մեր դէմ ու օգտւելով իր երկաթուղային գծերի լայն ցանցերից մեծաքանակ ուժերը տեղափոխեց արևելեան Պրուսիա և նպատակ

digitised by A.R.A.R.@

ունենալով այն հաշիւը որ կարող է ջարդել մեր տասերորդ բանակը, որը տեղաւորուած էր ամուր դիրքերում Անգէրապա և Մազուբեան լճի միջերին։ Այս հարուածը ապահովելու համար գերմանացիները նոյնպէս Բզուր և Բաւկա գետերի գօրաճակատի ուժեղն